ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 89-Ն | *Տեսակը* | Հիմնական |
| *Տիպը* | Որոշում | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | Միասնական կայք 2022.11.14-2022.11.27 Պաշտոնական հրապարակման օրը 23.11.2022 | *Ընդունման վայրը* | Ջերմուկ |
| *Ընդունող մարմինը* | Ջերմուկ համայնքի ավագանի | *Ընդունման ամսաթիվը* | 18.11.2022 |
| *Ստորագրող մարմինը* | Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ | *Ստորագրման ամսաթիվը* | 18.11.2022 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 01.01.2023 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2022 թ. N 89-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.4-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 4.1-րդ, 4.2-րդ, 6-րդ, 8-12-րդ, 17-րդ, 20-րդ կետերի դրույթներով՝ ավագանին ***որոշում է՝***

1. Սահմանել ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից։

*Կողմ -13* *Դեմ -0* *Չեռնպահ -0*

ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ
ԲԱԲԱՅԱՆ ԺԻՐԱՅՐ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՆԱՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱԶԱՏ
ՄԿՐՏՉՅԱՆ ՄԱՐԻՆԵ
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ
ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՒՍԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝** **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2022 թ. նոյեմբերի 18
ք. Ջերմուկ

**Հավելված**
**Ջերմուկ համայնքի ավագանու**
**2022 թվականի նոյեմբերի 18-ի**
**N 89-Ն որոշման**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված հեղուկ վառելիքի վաճառքի, սեղմված բնական գազի վաճառքի, հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի, խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու, ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման, առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու, հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման, քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման, սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվությունների (այսուհետ՝ թույլտվություն) տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Թույլտվությունը տրամադրվում է իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ դիմումատու) Ջերմուկ համայնքի ղեկավարի կողմից՝ սույն կարգի N 1 ձևին համապատասխան:

3. Թույլտվություն ստանալու համար դիմումատուն Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնում է էլեկտրոնային կամ թղթային եղանակով՝ N 2 ձևին համապատասխան դիմում, որին կից ներկայացվում են՝

1) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական ռեգիստրի գրանցման քաղվածքը.

2) շենքի կամ շինության նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը.

3) տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը.

4) Ջերմուկ համայնքի բյուջեի հանդեպ դիմումատուի պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկանքի պատճեն.

5) օբյեկտի ճակատային մասի գունավոր լուսանկարը:

4. Բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվություն ստանալու համար դիմումին կից ներկայացվում է նաև՝

1) քննարկվող տարածքի լուսանկարը.

2) էսքիզային առաջարկ (միայն՝ ծաղիկների բացօթյա վաճառք իրականացնելու համար նախատեսված տակդիր տեղադրելու դեպքում):

5. Քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվություն ստանալու համար դիմումին կից ներկայացվում է նաև.

1) բժշկի որակավորում ունեցող աշխատակցի աշխատանքային պայմանագրի կամ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքում գործող բժշկական հաստատության հետ կնքված համապատասխան պայմանագրի պատճենը.

2) բժիշկ աշխատակցի անձնագրի պատճենը.

3) բժիշկ աշխատակցի բժշկական որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը.

4) Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված 100 մետր շառավղի մեջ գտնվող հարակից գույքերի նպատակային և գործառնական նշանակությունների պարզաբանմամբ տեղեկանք:

6. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվություն ստանալու համար դիմումին կից ներկայացվում է նաև համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ–ճարտարապետի կողմից տրամադրված՝ 100 մետր շառավղի մեջ գտնվող հարակից գույքերի նպատակային և գործառնական նշանակությունների պարզաբանմամբ տեղեկանք:

7. Դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուին տրվում է համապատասխան թույլտվություն կամ դիմումը մերժվում է:

8. Դիմումը մերժվում է, եթե՝

1) սույն կարգի 3-6-րդ կետերով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են թերի (այդ թվում՝ տեղական տուրքի գումարը վճարվել է Ջերմուկ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված դրույքաչափից պակաս) և դրա մասին դիմումատուին տեղեկացնելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս կողմից դրանք չեն համալրվել.

2) գործունեության իրականացման վայրի շենքը կամ շինությունը չի համապատասխանում տվյալ գործունեությամբ զբաղվելու համար նախատեսված պահանջներին, ինչի վերաբերյալ պետական լիազոր մարմնի (մարմինների) կողմից ստացվել է համապատասխան տեղեկատվություն.

3) դիմումատուն Ջերմուկ համայնքի հանդեպ ունի չկատարված ժամկետանց պարտավորություններ, բացառությամբ, եթե դատական կարգով վիճարկում է տվյալ պարտավորության առկայությունը:

9. Դիմումը մերժելու դեպքում տեղական տուրքի վճարված գումարը վերադարձվում է օրենքով սահմանված կարգով:

10. Թույլտվությունը չի կարող դիմումատուի կողմից փոխանցվել այլ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կամ օգտագործվել այլ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կողմից:

11. Թույլտվությունն ստանալուց հետո թույլտվություն ստացած անձը պարտավոր է իր գործունեությունը կազմակերպել և իրականացնել Հայաստանի Հանրապետության՝ համապատասխան ոլորտի օրենսդրության պահանջներին համապատասխան:

***Հավ N 1***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ_____

Տրված ____ _____202 թ.
Թույլատրված գործունեության անվանումը
_____

Հայտատուի անունը, հայրանունը, ազգանունը և գտնվելու վայրը կամ իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը
_____
_____
_____

Գործունեության տեսակի իրականացման վայրը, շինության տեսակը
_____
_____
_____

Թույլտվության գործողության ժամկետը ____ _____ 202 թ-ից մինչև ____ _____ 202 թ-ը:

_____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

***Ձև N 2***

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի

Ջերմուկ համայնքի ղեկավար՝ _____

_____ *ին*
**/անուն, ազգանունը/**

ԴԻՄՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ _____

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Իրավաբանական անձի (կազմակերպության) անվանումը և կազմակերպական-իրավական ձևը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը, հարկ վճարողի հաշվառման համարը
_____

2. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գտնվելու վայրը
_____

3. Գործունեության տեսակի իրականացման վայրը, շինության տեսակը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցե, կապի այլ միջոցներ
_____

4. Ներկայացվող փաստաթղթերի ցանկը
_____
_____

5. Գործունեության անվանումը

_____

6. Թույլտվության ժամկետը

_____

/նշել թույլտվության պահանջվելիք ժամկետը/

Ներկայացված տեղեկատվությունների իսկությունը հաստատում եմ

_____

/կազմակերպության պատասխանատու անձի անունը, հայրանունը, ազգանունը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը/

_____ 20 թ.

Կ. Տ.

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 23 նոյեմբերի 2022 թվական:**